ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ «Ք. ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑԻ 31» ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « 3» հոկտեմբերի 2022

Գյումրու «Արիե Կուփերսթոքի անվան ՎԿ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Անահիտ Աղաջանյանի, այսուհետ՝ «Ընկերություն», մի կողմից, և Միասնական սոցիալական ծառայությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ագնեսա Աղաբաբյանի, այսուհետ՝ «Ծառայություն» մյուս կողմից, հետագայում միասին՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1. Ծառայությունը պարտավորվում է կատարել ք. Գյումրի, Շիրակացի 31 հասցեում գտնվող վարչական շենքի ջեռուցման գումարի փոխհատուցում (այսուհետև՝ Փոխհատուցում) Ընկերությանը՝ ըստ ամիսների և փաստացի ջեռուցված օրերի քանակի:

2. **Պայմանագրի ժամկետը**

2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

2.2. Պայմանագրով նախատեսված Փոխհատուցումը Ծառայությունը վճարում է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ օգտագործված ջեռուցման համար:

2.3. Ծառայության կողմից Վճարն իրականացվում է Ընկերության կողմից համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո քսան աշխատանքային օրվա

ժամկետում՝ գումարը փոխանցելով Ընկերության կողմից ներկայացված համապատասխան հաշվեհամարին:

3. **Պայմանագրի արժեքը և վճարման կարգը**

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված ջեռուցման համար սահմանված Փոխհատուցումը յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$X=V:G*C$$

Որտեղ՝

«X»-ը՝ Ծառայության կողմից ամսական վճարվելիք գումարի չափն է,

«V»-ն՝ տվյալ ամսում ծախսված գազի դիմաց ներկայացված վճարի չափն է,

«G»-ն՝ վարչական շենքի ընդհանուր տարածքից օգտակար օգտագործման տարածքն է, որի վրա տարածվում է կոմունալ ծառայությունը, այդ թվում՝ Ծառայությանը հատկացված տարածքը:

«C»-ն՝ Ծառայության կողմից օգտագործվող օգտակար օգտագործման տարածքն է (98.1քմ.):

4. **Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

4.1. Ծառայությունը պարտավոր է սույն Պայմանագրի 3.1-ին կետով հաշվարկված գումարը Պայմանագրի 2.3-ին կետով սահմանված կարգով փոխանցելուց հետո հինգ աշխատանքային օրվա ժամկետում վճարման անդորրագրի պատճենը ներկայացնել Ընկերության աշխատակազմի ֆինանսական բաժին՝ միաժամանակ էլեկտրոնային տարբերակը ուղարկելով Ընկերության կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին:

4.2. Ծառայությունը միչև փոխանցում կատարելը իրավունք ունի դիմելու Ընկերությանը՝ Ընկերության տարածքի՝ տվյալ ամսվա ջեռուցման համար վճարման ենթակա ընդհանուր գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

4.3. Ընկերությունը պարտավոր է սույն Պայմանագրով նախատեսված կարգով Ծառայությանն ապահովել անհրաժեշտ ջեռուցմամբ:

4.4. Ընկերությունը պարտավոր է հաշվարկի ստուգման ճշտության համար info@socservice.am էլեկտրոնային հասցեին ուղարկել գազի ծախսի վերաբերյալ մատակարարի կողմից դուրս գրված հաշվի պատճենը՝ սույն պայմանագրի 3-րդ կետում նշված բանաձևի միջոցով:

4.5. Ընկերությունը իրավունք ունի առանց կողմին տեղեկացնելու դադարեցնել Ծառայությանը հատկացված տարածքի ջեռուցումը, եթե Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված վճարումը Ծառայության կողմից ուշացվել է է 2 (երկու) անգամ:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1 Ծառայության կողմից սույն Պայմանագրով սահմանված ժամկետում փոխհատուցում չվճարելու դեպքում վճարվում է տույժ՝ յուրաքանչյուր ժամետանց օրվա համար սույն Պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.2 Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պայմանագրի խախտումը պայմանագրի մյուս կողմի պարտավորությունների անպատշաճ կատարման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք էր:

5.3 Կողմերը սույն Պայմանագրով նախատեսված տույժերը վճարելով և վնասները հատուցելով չեն ազատվում սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները լրիվ ծավալով կատարելուց:

6. Այլ պայմաններ

6.1. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

6.2. Սույն Պայմանագրի Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են

բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն Պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

Միասնական սոցիալական ծառայություն Ք. Երևան, Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511 Գլխավոր քարտուղար՝ Ա.Աղաբաբյան ---------- ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«Արիե Կուփերսթոքի անվան ՎԿ» ՓԲԸ ***ք. Գյումրի, Շիրակացի 31*** ***Գրանցման համար՝ 29.120.02055*** Տնօրեն՝ Անահիտ Աղաջանյան ---------- ---------- (ստորագրություն) Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ «ԱՐԻԵ ԿՈՒՓԵՐՍԹՈՔԻ ԱՆՎԱՆ ՎԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԿՆՔՎԱԾ, «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ «Ք. ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑԻ 31» ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«28» «մարտի» 2023**

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Աղաբաբյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա, մի կողմից և Գյումրու «Արիե Կուփերսթոքի անվան ՎԿ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Աղաջանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

Կողմերը համաձայնվեցին՝

1.1 2022 թվականի հոկտեմբերի 3-ի Միասնական Սոցիալական Ծառայության և Գյումրու «Արիե Կուփերսթոքի անվան ՎԿ» ՓԲ ընկերության միջև կնքված «Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի «ք. Գյումրի, Շիրակացի 31» հասցեում գտնվող վարչական շենքի ջեռուցման դիմաց փոխհատուցում իրականացնելու վերաբերյալ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1-ին կետում «2022 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2023 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերով,

1.2 Սույն Համաձայնագիրը կնքված է համարվում ստորագրման պահից, և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, պայմանագրի առարկան, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի իրավաբանական հասցեները

Միասնական սոցիալական ծառայություն Ք. Երևան, Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511 Գլխավոր քարտուղար՝ Ա.Աղաբաբյան ----------	«Արիե Կուփերսթոքի անվան ՎԿ» ՓԲ ընկերության ք. Գյումրի, Շիրակացի 31 Գրանցման համար՝ 29.120.02055 Տնօրեն՝ Ա.Աղաջանյան ----------
(ստորագրություն, Կ.Տ)	(ստորագրություն, Կ.Տ)